

►B

**ԽՈՐՀՐԴԻ 1998 թվականի նոյեմբերի 3-ի 98/83/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ
Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին
(ՊՏ L 330, 05.12.1998թ., էջ 32)**

Փոփոխված՝

		Պաշտոնական տեղեկագիր		
		թիվ	էջ	ամսաթիվ
►M1	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2003 L 284 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 1882/2003 (ԵՀ) կանոնակարգով		1	31.10.2003թ. 31.10.2003թ.
▼M2	Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 L 188 թվականի հունիսի 18-ի թիվ 596/2009 (ԵՀ) կանոնակարգով	L 188	14	18.07.2009 18.07.2009թ.

Ողղված՝

►C1

ՊՏ L 111, 20.04.2001թ., էջ 31 (98/83) ուղղումով

▼B

**ԽՈՐՀՐԴԻ 1998 թվականի նոյեմբերի 3-ի 98/83/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ
Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 130(ժթ)(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը ([1](#)),

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով կոմիտեի եզրակացությունը ([2](#)),

հաշվի առնելով Տարածաշրջանային հարցերով կոմիտեի եզրակացությունը ([3](#)),

գործելով 189(գ) հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն ([4](#)),

- 1) քանի որ անհրաժեշտ է «Մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին» Խորհրդի 1980 թվականի հուլիսի 15-ի 80/778/ԵՏՀ հրահանգը ([5](#)) համապատասխանեցնել գիտատեխնիկական առաջընթացին, քանի որ այդ հրահանգի կիրարկման արդյունքում ձեռք բերված փորձը ցույց է տալիս, որ ստանդարտներին համապատասխանելու հարցում թերացումներին անդրադառնալու նպատակով անհամ պետությունների համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխանաբար ճկուն և

թափանցիկ իրավական դաշտ. քանի որ, ավելին՝ այդ Հրահանգը, և մասնավորապես սուբսիդիարության սկզբունքը, պետք է կրկին ուսումնասիրության ենթարկվի՝ «Եվրոպական միության մասին» Պայմանագրին համապատասխան,

- 2) քանի որ Պայմանագրի 3«բ» հոդվածի հետ համապատասխանելու նպատակով, որով սահմանվում է, որ Համայնքի ոչ մի գործողություն չպետք է Պայմանագրի նպատակներին հասնելու համար պահանջվածից ավելին լինի, անհրաժեշտ է վերանայել 80/778/ԵՏՀ հրահանգը՝ հիմնական ուշադրությունը դարձնելով որակի և սանիտարական կարևոր ցուցանիշների հետ համապատասխանությանը, և անդամ պետություններին ազատ հնարավորություն տալով նպատակահարմարության դեպքում ավելացնելու մյուս ցուցանիշները,
- 3) քանի որ, սուբսիդիարության սկզբունքի համաձայն, Համայնքի գործողությունները պետք է իրականացվեն անդամ պետությունների իրավասու մարմինների գործողություններին օժանդակելու և դրանք լրացնելու նպատակով,
- 4) քանի որ, սուբսիդիարության սկզբունքի համաձայն, ելնելով Միության տարածաշրջանների միջև բնական և սոցիալ-տնտեսական տարբերություններից, պահանջվում է, որ հսկողության (մոնիթորինգի), լաբորատոր հետազոտության վերաբերյալ որոշումների և թերացումների վերացմանն ուղղված ակտերի մեծ մասն ընդունվեն տեղական, տարածաշրջանային կամ ազգային մակարդակով, այնքանով, որքանով այդ տարբերությունները չեն խոչընդոտում օրենսդրական դաշտի, կանոնակարգերի և սույն Հրահանգի դրույթների սահմանումը,
- 5) քանի որ, մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակին ներկայացվող հիմնական և կանխարգելիչ բնույթ ունեցող սանիտարահիգիենիկ ցուցանիշների գծով Համայնքի ստանդարտներն անհրաժեշտ են, եթե Համայնքի այլ ակտերի առնչությամբ բնապահպանության ու որակի մասով իրագործման ենթակա նվազագույն նպատակները սահմանվեն այնպես, որ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի կայուն օգտագործումը երաշխավորվի և պահպանվի,
- 6) քանի որ, հաշվի առնելով մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի կարևորությունը մարդու առողջության համար, անհրաժեշտ է Համայնքի մակարդակով սահմանել որակական այն կարևոր ստանդարտները, որոնց պետք է համապատասխանի մարդու կողմից սպառման համար նախատեսված ջուրը,
- 7) քանի որ անհրաժեշտ է ներառել նաև սննդի արդյունաբերության մեջ օգտագործվող ջուրը, եթե չի սահմանվել, որ այդ ջրի օգտագործումը չի ազդում վերջնական արտադրանքի առողջարարության վրա,
- 8) քանի որ ջրամատակարարման ընկերություններին՝ խմելու ջրի որակական ստանդարտներին համապատասխանելու հնարավորություն տալու նպատակով պետք է կիրառվեն ջրերի պաշտպանության համարժեք միջոցներ՝ ապահովելու համար, որ մակերևութային և ստորերկրյա ջրերը մաքուր պահվեն. քանի որ նույն նպատակին կարելի է հասնել ջրի մաքրման համապատասխան միջոցներով, որոնք մատակարարումից առաջ են կիրառվում,
- 9) քանի որ եվրոպական ջրային քաղաքականության տրամաբանությամբ ենթադրվում է, որ պատշաճ ժամկետում պետք է ընդունվի ջրային ոլորտին համապատասխան հրահանգ,
- 10) քանի որ սույն Հրահանգի գործողության ոլորտից անհրաժեշտ է բացառել բնական հանքային ջրերը և դեղագործական արտադրանք հանդիսացող ջրերը, քանի որ ջրերի այդ տեսակների համար սահմանվել են հատուկ նորմեր,
- 11) քանի որ որակի վատթարացման դեպքում պահանջվում է միջոցներ ձեռնարկել՝ կապված առողջության հետ անմիջականորեն առնչվող բոլոր ցուցանիշների և այլ ցուցանիշների հետ.

քանի որ, ավելին՝ այդ միջոցները պետք է մանրակրկիտ կերպով համաձայնեցվեն «Բույսերի պաշտպանության միջոցների շուկայահանման մասին» Խորհրդի 1991 թվականի հուլիսի 15-ի 91/414/ԵՏՀ հրահանգի (6) ու «Բիոցիդների շուկայահանման մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 1998 թվականի փետրվարի 16-ի 98/8/ԵՀ հրահանգի (7) կիրարկման հետ,

12) քանի որ անհրաժեշտ է Համայնքի ամբողջ տարածքում կարևոր նյութերի համար առանձին նորմաներ սահմանել այն սահմանաչափով, որը բավարար է՝ սույն Հրահանգով նախատեսված նպատակի իրագործումն ապահովելու համար,

13) քանի որ ցուցանիշների նորմաները գիտականորեն հիմնավորված են՝ հաշվի առնելով նաև զգուշության սկզբունքը. քանի որ այդ նորմաներն ընտրվել են մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի անվտանգ օգտագործումն ամբողջ կյանքի ընթացքում ապահովելու նպատակով, այդպիսով ապահովելով առողջության պահպանության բարձր մակարդակ,

14) քանի որ թե՛ միկրոկենսաբանական, և թե՛ քիմիական ռիսկերը կանխելու նպատակով անհրաժեշտ է հավասարակշռություն սահմանել. քանի որ, այդ նպատակով և հաշվի առնելով ցուցանիշների նորմաների հետագա վերանայումը, մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի նկատմամբ կիրառվող ցուցանիշների նորմաների սահմանումը պետք է բխի հանրային առողջության նկատառումներից և հիմնված լինի ռիսկի գնահատման մեթոդի վրա,

15) քանի որ ներկայումս չկան բավարար չափով տեղեկություններ, որոնց հիման վրա սահմանվեն Համայնքի մասշտաբով էնդոկրին համակարգի խախտումներ առաջացնող քիմիկատների ցուցանիշների նորմաները, ավելանում է մարդկանց և կենդանական աշխարհի վրա առողջության համար վտանգավոր նյութերի հնարավոր ազդեցության վերաբերյալ մտահոգությունը,

16) քանի որ, մասնավորապես I հավելվածում նշված ստանդարտները հիմնականում հիմնված են Առողջապահության համաշխարհային կազմակերպության «Ուղեցույցներ խմելու ջրի որակի վերաբերյալ» փաստաթղթի վրա, ինչպես նաև Հանձնաժողովի գիտախորհրդատվական կոմիտեի՝ քիմիական միացությունների տոքսիկ և էկոտոքսիկ ազդեցության վերաբերյալ եզրակացության վրա,

17) քանի որ անդամ պետությունները պետք է նորմաներ սահմանեն՝ I հավելվածում չընդգրկված լրացուցիչ այլ ցուցանիշների համար, եթե իրենց տարածքներում մարդու առողջության պաշտպանության համար դրանք անհրաժեշտ են,

18) քանի որ անդամ պետությունները կարող են նորմաներ սահմանել՝ I հավելվածում չընդգրկված լրացուցիչ այլ ցուցանիշների համար, եթե դրանք անհրաժեշտ են համարվում մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի արտադրության, բաշխման և ստուգման որակի ապահովման համար,

19) քանի որ, երբ անդամ պետություններն անհրաժեշտ են համարում ավելի խիստ ստանդարտներ ընդունել, քան I հավելվածի Ա և Բ մասերում սահմանվածները, կամ ստանդարտներ՝ I հավելվածում չընդգրկված լրացուցիչ այլ ցուցանիշների համար, որոնք սակայն անհրաժեշտ են մարդու առողջության պաշտպանության համար, ապա նրանք պետք է այդ ստանդարտների մասին տեղեկացնեն Հանձնաժողովին,

20) քանի որ անդամ պետությունները՝ պաշտպանական ավելի խիստ միջոցներ ներմուծելու կամ կիրառելու դեպքում, պարտավոր են հարգել Պայմանագրի սկզբունքները և նորմերն այնպես, ինչպես դրանք մեկնաբանվում են Արդարադատության դատարանի կողմից,

- 21) քանի որ պետք է ապահովվի ցուցանիշների նորմերի հետ համապատասխանությունն այն կետերում, որտեղ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջուրը հասանելի է համապատասխան օգտագործողին,
- 22) քանի որ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակը կարող է ենթարկվել ներտնային ջրաբաշխիչ համակարգի ազդեցությանը. ավելին, քանի որ ընդունված է, որ անդամ պետությունների պատասխանատվությունը չի տարածվում ո՛չ ներտնային ջրաբաշխիչ ցանցի, և ո՛չ էլ դրա տեխնիկական սպասարկման վրա,
- 23) քանի որ յուրաքանչյուր անդամ պետություն պետք է ստեղծի հսկողության (մոնիթորինգի) ծրագրեր՝ ստուգելու համար, որ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջուրը համապատասխանում է սույն Հրահանգի պահանջներին. քանի որ նման հսկողության ծրագրերը պետք է համարժեք լինեն տեղական կարիքներին և պետք է համապատասխանեն սույն Հրահանգով սահմանված հսկողության նվազագույն պահանջներին,
- 24) քանի որ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի լաբորատոր հետազոտության համար կիրառվող մեթոդները պետք է լինեն այնպիսին, որ ապահովեն ստացված արդյունքների հուսալի և համեմատելի լինելը,
- 25) քանի որ սույն Հրահանգով սահմանվող ստանդարտները չպահպանելու դեպքում տվյալ անդամ պետությունը պետք է ուսումնասիրի պատճառը և ապահովի, որ ջրի որակի վերականգնման համար անհրաժեշտ ուղղիչ գործողություններն հնարավորինս արագ իրականացվեն,
- 26) քանի որ կարևոր է կանխել մարդու առողջությունը վտանգող աղտոտված ջրերի օգտագործումը. քանի որ նման ջրերի մատակարարումը պետք է արգելվի կամ դրա օգտագործումը՝ սահմանափակվի,
- 27) քանի որ ինդիկատորային ֆունկցիա ունեցող ցուցանիշի հետ անհամապատասխանության դեպքում տվյալ անդամ պետությունը պետք է քննի, թե արդյոք այդ անհամապատասխանությունը վտանգավոր է մարդու առողջության համար. քանի որ այն պետք է ուղղիչ միջոցներ ձեռնարկի՝ ջրի որակը վերականգնելու նպատակով, եթե դա անհրաժեշտ է մարդու առողջության պաշտպանության համար,
- 28) քանի որ, եթե մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի վերականգնման համար անհրաժեշտ է նման ուղղիչ միջոց ձեռնարկել Պայմանագրի 130(Ժր)(2) հոդվածի համաձայն, ապա առաջնահերթությունը պետք է տրվի այն միջոցին, որը խնդիրը շտկում է հենց սկզբնաղբյուրից,
- 29) քանի որ անդամ պետությունները որոշակի հանգամանքներում պետք է թույլտվություն ունենան սույն Հրահանգից շեղումներ անելու հնարավորություն տրամադրել. քանի որ, ավելին՝ անհրաժեշտ է համապատասխան շրջանակ սահմանել նման շեղումների համար՝ պայմանով, որ դրանք պոտենցիալ վտանգ չներկայացնեն մարդու առողջության համար, և պայմանով, որ հակառակ պարագայում մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի մատակարարումը տվյալ տարածքում որևէ այլ ողջամիտ միջոցներով չի կարող ապահովվել,
- 30) քանի որ, եթե մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի արտադրության կամ բաշխման ընթացքում օգտագործվում են որոշակի նյութեր, ապա անհրաժեշտ են դրանց օգտագործումը կարգավորող նորմեր՝ մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցություններից խուսափելու համար,
- 31) քանի որ, գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված, կարող է անհրաժեշտություն առաջանալ արագորեն համապատասխանեցնելու II և III հավելվածներով սահմանված տեխնիկական պահանջները. քանի որ, ավելին՝ այդ նպատակի համար

պահանջվող միջոցների կիրառությունը դյուրին դարձնելու համար պետք է ապահովվի ընթացակարգ, որով Հանձնաժողովը անդամ պետությունների ներկայացուցիչներից կազմված կոմիտեի օժանդակությամբ կարող է ընդունել նման համապատասխանեցումները,

32) քանի որ սպառողները պետք է համապատասխան և պատշաճ կերպով տեղեկացված լինեն մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին, անդամ պետությունների կողմից արված ցանկացած շեղման և իրավասու մարմինների կողմից ձեռնարկված ուղղիչ միջոցների մասին. քանի որ՝ ավելին, մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին տեղեկություններ ձեռք բերելիս պետք է հաշվի առնվեն Հանձնաժողովի թե՛ տեխնիկական, և թե՛ վիճակագրական կարիքները, ինչպես նաև անհատի իրավունքները,

33) քանի որ բացառիկ հանգամանքներում և աշխարհագրական հիմքերով որոշված տարածքներում անդամ պետություններին կարող է անհրաժեշտ լինել ավելի ընդարձակ ժամանակային սահմաններ ընձեռել՝ սույն Հրահանգի որոշակի դրույթների հետ համապատասխանությունն ապահովելու համար,

34) քանի որ սույն Հրահանգը չպետք է ազդի անդամ պետությունների պարտավորությունների վրա, որոնք վերաբերում են ազգային իրավունքում փոխատեղման կամ դրա կիրառության վերջնաժամկետին, ինչպես ցույց է տրված IV Հավելվածում,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

Նպատակը

1. Սույն Հրահանգը վերաբերում է մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակին:
2. Սույն Հրահանգի նպատակը մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի աղտոտվածության բացասական հետևանքներից մարդու առողջության պաշտպանությունն է՝ ապահովելով, որ այն լինի առողջարար և մաքուր:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հրահանգի նպատակներով՝

1. «մարդու կողմից սպառման համար նախատեսված ջուր» նշանակում է՝
 - ա) բոլոր ջրերն իրենց սկզբնական վիճակում կամ մաքրումից հետո, որոնք նախատեսված են խմելու, խոհարարական պատրաստության, սննդի պատրաստման կամ կենցաղային այլ նպատակներով սպառման համար՝ անկախ դրա ծագումից և բաշխման համակարգերից, ջրի ցիստեռնից կամ շշերով, կամ տարաներով մատակարարված լինելու հանգամանքից,
 - բ) բոլոր ջրերը, որոնք օգտագործվում են սննդամթերք արտադրող ձեռնարկություններում մարդու կողմից սպառման համար նախատեսված արտադրանքի կամ նյութերի արտադրության, վերամշակման, պահածոյացման կամ իրացման համար, եթե ազգային իրավասու մարմինները վստահ են, որ ջրի որակը չի կարող ազդել պատրաստի սննդամթերքի առողջարարության վրա,
2. «ներտնային բաշխիչ համակարգ» նշանակում է խողովակազծերը, սարքավորումները և կենցաղային սարքերը, որոնք սովորաբար տեղակայված են մարդու կողմից օգտագործվող ծորակների և բաշխիչ

ցանցի միջև, միայն եթե դրանք չեն գտնվում ջրամատակարարման ընկերության պատասխանատվության շրջանակում՝ ազգային համապատասխան իրավունքին համապատասխան:

Հոդված 3

Բացառությունները

1. Սույն Հրահանգը չի կիրառվում հետևյալի նկատմամբ՝

- ա) բնական հանքային ջրեր, որոնք որպես այդպիսին ճանաչվել են ազգային իրավասու մարմինների կողմից՝ «Բնական հանքային ջրերի արդյունահանման և իրացման մասին անդամ երկրների օրենքները մոտարկելու մասին» Խորհրդի 1980 թվականի հուլիսի 15-ի 80/777/ԵՏՀ հրահանգին (8) համապատասխան,
- բ) ջրեր, որոնք դեղ են՝ «Դեղերի վերաբերյալ իրավական ակտով, կանոնակարգով կամ վարչական ակտով սահմանված դրույթների մոտարկման մասին» Խորհրդի 1965 թվականի հունվարի 26-ի 65/65/ԵՏՀ հրահանգի (9) իմաստով:

2. Անդամ պետությունները կարող են սույն Հրահանգի դրույթները չկիրառել հետևյալի նկատմամբ՝

- ա) ջուր, որը նախատեսված է բացառապես այն նպատակների համար, որոնց դեպքում իրավասու մարմինները վստահ են, որ ջրի որակն ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ ազդեցություն չունի սպառողների առողջության վրա,
- բ) մարդու կողմից սպառման համար նախատեսված ջուր, որը ստացվում է օրական միջինը 10 mZ3-ից պակաս ծավալ ապահովող կամ 50-ից քիչ անձանց սպասարկող անհատական ջրամատակարարումից, եթե ջուրը չի մատակարարվում որպես առևտրային կամ հանրային գործունեության մաս:

3. Այն անդամ պետությունները, որոնք օգտվում են 2(բ) պարբերությամբ նախատեսված բացառություններից, պետք է ապահովեն, որ տվյալ բնակչությունը տեղեկացված լինի դրա մասին և մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի աղտոտման հետևանքով առաջացող բացասական ազդեցությունից մարդու առողջությունը պաշտպանելուն ուղղված ցանկացած գործողության մասին: Բացի դրանից, եթե մարդու առողջության համար ի հայտ է գալիս պոտենցիալ վտանգ, որը գալիս է այդ ջրի որակից, ապա տվյալ բնակչությանը պետք է անհապաղ կարգով համապատասխան խորհրդատվություն տրվի:

Հոդված 4

Ընդհանուր պարտականությունները

1. Առանց հակասելու Համայնքի դրույթներով նախատեսված իրենց պարտականություններին՝ անդամ պետությունները մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի առողջարարությունն ու մաքրությունն ապահովելու համար պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն : Սույն Հրահանգի նվազագույն պահանջներին համապատասխան, մարդու կողմից սպառման համար նախատեսված ջուրն առողջարար է և մաքուր, եթե այն՝

- ա) զերծ է միկրոօրգանիզմներից և մակաբույծներից, ինչպես նաև ցանկացած նյութից, որոնք որոշակի քանակի կամ կոնցենտրացիայի դեպքում վտանգավոր են մարդու առողջության համար, և
- բ) բավարարում է I հավելվածի Ա և Բ մասերում սահմանված նվազագույն պահանջները,

1. և եթե, 5–8–րդ ու 10–րդ հոդվածներին համապատասխան դրույթների և Պայմանագրի համաձայն, անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր մնացած միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար, որ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջուրը համապատասխանի սույն Հրահանգին:

2. Անդամ պետություններն ապահովում են, որ սույն Հրահանգի կիրարկման համար ընդունված ակտերը ոչ մի պարագայում ուղղակիորեն կամ անուղղակիորեն մարդու կողմից սպառման համար

նախատեսված ջրի ներկայիս՝ մարդու առողջության պաշտպանության համար բավարար որակի վատթարացումը կամ խմելու ջրի արտադրության համար օգտագործվող ջրերի աղտոտվածության ավելացումը թույլատրող ազդեցություն չունենան:

Հոդված 5

Որակի ստանդարտները

1. Անդամ պետությունները I հավելվածում նախատեսված ցուցանիշների համար պետք է մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի նկատմամբ կիրառվող նորմաներ սահմանեն:
2. 1-ին պարբերության համաձայն սահմանված նորմաները չպետք է պակաս խիստ լինեն I հավելվածում սահմանվածներից: Ինչ վերաբերում է I հավելվածի Գ մասում սահմանված ցուցանիշներին, ապա նորմաները պետք է ամրագրվեն միայն հսկողության նպատակներով և 8-րդ հոդվածով սահմանված պարտականությունների կատարման համար:
3. Անդամ պետությունը պետք է նորմաներ սահմանի I հավելվածում չընդգրկված լրացուցիչ ցուցանիշների համար, եթե դա պահանջվում է իր ազգային տարածքում կամ դրա մի մասում՝ մարդու առողջության պաշտպանության համար: Սահմանված նորմաները պետք է, որպես մինիմում, բավարարեն 4(1)(ա) հոդվածի պահանջները:

Հոդված 6

Համապատասխանության ստուգման կետերը

1. 5-րդ հոդվածի համաձայն սահմանված ցուցանիշների նորմաները պետք է պահպանվեն՝
 - ա) ջրաբաշխիչ ցանցից մատակարարվող ջրի դեպքում՝ տարածքների կամ հաստատության ներսում գտնվող կետում, որտեղ ջուրը հոսում է այն ծորակներից, որոնք սովորաբար օգտագործվում են մարդու կողմից սպառման համար,
 - բ) ցիստեռնից մատակարարվող ջրի դեպքում՝ այն կետում, որտեղից ջուրը դուրս է գալիս ցիստեռնից,
 - գ) վաճառքի նպատակով շալցված կամ տարաների մեջ լցված ջրի դեպքում՝ այն կետում, որտեղ ջուրը լցվում է շշերի կամ տարաների մեջ,
 - դ) սննդամթերք արտադրող ձեռնարկությունների կողմից օգտագործվող ջրի դեպքում՝ այն կետում, որտեղ ջուրն օգտագործվում է ձեռնարկությունում:
2. 1(ա) պարբերությունում նշված ջրի դեպքում համարվում է, որ անդամ պետությունները կատարել են սույն հոդվածով և 4-րդ ու 8(2) հոդվածով սահմանված իրենց պարտականությունները, եթե հնարավոր է հաստատել, որ 5-րդ հոդվածին համապատասխան սահմանված ցուցանիշների նորմաների հետ անհամապատասխանությունը պայմանավորված է ներտնային ջրաբաշխիչ համակարգերով կամ դրանց տեխնիկական սպասարկմամբ, բացառությամբ այն տարածքների և հաստատությունների, որտեղ ջուրը մատակարարվում է հանրությանը, ինչպես օրինակ՝ դպրոցները, հիվանդանոցները և ռեստորանները:
3. Այն դեպքում, երբ կիրառվում է 2-րդ պարբերությունը, և վտանգ է առկա, որ 1(ա) պարբերությամբ նախատեսված ջուրը չի համապատասխանի 5-րդ հոդվածով սահմանված նորմաներին, անդամ պետություններն, այնուամենայնիվ, պետք է ապահովեն, որ՝
 - ա) ձեռնարկվեն համարժեք միջոցներ՝ ցուցանիշների նորմաների հետ անհամապատասխանության վտանգի նվազեցման կամ վերացման համար, օրինակ՝ սեփականություն ունեցողներին տեղեկացնեն իրենց կողմից ձեռնարկվող հնարավոր ուղղիչ միջոցի մասին, և (կամ)ձեռնարկվեն այլ միջոցներ, ինչպես, օրինակ՝ նախքան ջրի մատակարարումը դրա բնույթի կամ հատկությունների փոփոխման համար մաքրման տեխնոլոգիաների օգտագործումը՝ մատակարարումից հետո ցուցանիշների նորմաներին չհամապատասխանող ջրի վտանգը նվազեցնելու կամ վերացնելու նպատակով,

և

- բ) սպառողներին պատշաճ կերպով տեղեկություններ և խորհրդատվություն տրամադրվի՝ իրենց կողմից ձեռնարկվելիք հնարավոր ուղղիչ միջոցների մասին:

Հոդված 7

Հսկողությունը (Մոնիթորինգ)

1. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի կանոնավորապես հսկողությունն ապահովելու նպատակով՝ ստուգելու համար, որ սպառողներին տրվող ջուրը համապատասխանում է սույն Հրահանգի պահանջներին և, մասնավորապես, 5-րդ հոդվածին համապատասխան սահմանված նորմաներին: Նմուշները պետք է վերցվեն այնպես, որ դրանք ներկայացուցչական լինեն ամբողջ տարվա ընթացքում սպառվող ջրի որակի համար: Բացի դրանից՝ անդամ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու համար, որ այն դեպքերում, երբ վարակազերծումը մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի արտադրության և բաշխման մասն է կազմում, ապա ստուգվի վարակազերծման միջոցով մաքրման արդյունավետությունը և, որ վարակազերծման կողմնակի արտադրանքից առաջացած ցանկացած աղտոտվածություն պահպանվի որքան հնարավոր է ցածր մակարդակի վրա առանց թուլացնելու վարակազերծման ազդեցությունը:

2. 1-ին պարբերությամբ սահմանված պարտականությունները կատարելու համար իրավասու մարմինների կողմից պետք է ստեղծվեն հսկողության համապատասխան ծրագրեր՝ մարդու կողմից սպառման համար նախատեսված բոլոր ջրերի համար: Հսկողության այդ ծրագրերը պետք է համապատասխանեն II հավելվածով սահմանված նվազագույն պահանջներին:

3. Նմուշառման կետերը, որոնք նույնպես պետք է համապատասխանեն II հավելվածով սահմանված նվազագույն պահանջներին, որոշվում են իրավասու մարմինների կողմից:

▼M2

4. Սույն հոդվածով սահմանված հսկողության համայնքային ուղեցույցները կարող են կազմվել 12(2) հոդվածում նշված կառավարման ընթացակարգին համապատասխան:

▼B

5.

- ա) Անդամ պետությունները պետք է ապահովեն ցուցանիշների լաբորատոր հետազոտությունների համար III հավելվածում սահմանված տեխնիկական կանոնակարգերի հետ համապատասխանությունը:

- բ) III հավելվածի 1-ին մասում նշված մեթոդներից բացի այլ մեթոդներ ևս կարող են օգտագործվել՝ պայմանով, որ հնարավոր լինի ցույց տալու, որ ստացված արդյունքները նույնքան հուսալի են, որքան սահմանված մեթոդներով ստացվածները: Այն անդամ պետությունը, որն ընտրում է այլընտրանքային մեթոդի կիրառությունը, պետք է Հանձնաժողովին տրամադրի համապատասխան տեղեկություններ այդ մեթոդների և դրանց համարժեքության մասին:

- գ) III հավելվածի 2-րդ և 3-րդ մասերում թվարկված ցուցանիշների համար կարող է կիրառվել լաբորատոր հետազոտության ցանկացած մեթոդ՝ պայմանով, որ այն բավարարի այդ մասերով սահմանված պահանջները:

6. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ըստ առանձին դեպքերի լրացուցիչ հսկողություն իրականացվի այն նյութերի և միկրոօրգանիզմների նկատմամբ, որոնց համար 5-րդ հոդվածի համաձայն որևէ նորմա չի սահմանվել, եթե որևէ կասկած կա, որ դրանք կարող են առկա լինել այն քանակությամբ կամ թվով, որը պոտենցիալ վտանգ է ներկայացնում մարդու առողջության համար:

Հոդված 8

Ուղղիչ միջոց և օգտագործման սահմանափակում

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ 5-րդ հոդվածի համաձայն սահմանված նորմաների հետ ցանկացած անհամապատասխանություն անհապաղ կարգով ուսումնասիրվի՝ պատճառը հայտնաբերելու նպատակով:
2. Եթե, չնայած 4(1) հոդվածով սահմանված պարտականությունների կատարման նպատակով ձեռնարկված միջոցներին, մարդու կողմից սպառման համար նախատեսված ջուրը չի համապատասխանում 5-րդ հոդվածի համաձայն սահմանված նորմաներին՝ պահպանելով 6(2) հոդվածի դրույթները, տվյալ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ որքան հնարավոր է շուտ ձեռնարկվեն անհրաժեշտ ուղղիչ միջոցներ՝ ջրի որակը վերականգնելու համար և պետք է առաջնահերթությունը տան հարկադրական միջոցներին, հաշվի առնելով, ի թիվս այլոց, տվյալ նորմայի հետ անհամապատասխանության աստիճանը և մարդու առողջության համար պոտենցիալ վտանգը:
3. Անկախ նրանից՝ գրանցվել է արդյոք նորմաների հետ անհամապատասխանության դեպք, թե ոչ, անդամ պետությունները պետք է ապահովեն, որ մարդու առողջության համար պոտենցիալ վտանգ ներկայացնող՝ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի ցանկացած մատակարարում արգելվի կամ սահմանափակվի դրա օգտագործումը կամ ձեռնարկվի այլ միջոց, որն անհրաժեշտ է՝ մարդու առողջության պաշտպանության համար: Նման դեպքերում դրա մասին տեղեկություններ և անհրաժեշտ խորհրդատվություն պետք է անհապաղ տրամադրվի սպառողներին :
4. Իրավասու կամ համապատասխան մյուս մարմինները պետք է որոշում կայացնեն, թե ինչ միջոց կիրառեն՝ 3-րդ պարբերության համաձայն, հաշվի առնելով մարդու առողջության համար այն ռիսկերը, որոնք կարող են առաջանալ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի մատակարարման ընդհատման կամ օգտագործման սահմանափակման դեպքում:
5. Անդամ պետությունները կարող են ուղեցույցներ մշակել՝ 4-րդ պարբերությամբ սահմանված իրենց պարտականությունների կատարման հարցում իրավասու մարմիններին օժանդակելու նպատակով:
6. I հավելվածի Գ մասում սահմանված նորմաների կամ տեխնիկական կանոնակարգերի հետ անհամապատասխանության դեպքում անդամ պետությունները պետք է քննարկեն, թե արդյոք այդ անհամապատասխանությունը որևէ վտանգ է ներկայացնում մարդու առողջության համար: Նրանք պետք է ուղղիչ գործողություններ ձեռնարկեն՝ ջրի որակը վերականգնելու համար, եթե դա անհրաժեշտ է մարդու առողջության պահպանության համար:
7. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ուղղիչ միջոց ձեռնարկելու դեպքում սպառողները տեղեկացվեն այդ մասին, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինները համարում են, որ նորմայի հետ անհամապատասխանությունն աննշան բնույթ է կրում:

Հոդված 9

Շեղումներ

1. Անդամ պետությունները կարող են I հավելվածի Բ մասում կամ 5(3) հոդվածի համաձայն սահմանված նորմաներից շեղումներ նախատեսել՝ իրենց կողմից սահմանման ենթակա նորմայի առավելագույն չափով՝ պայմանով, որ ոչ մի շեղում պոտենցիալ վտանգ չներկայացնի մարդու առողջության համար, և պայմանով, որ հակառակ պարագայում մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի մատակարարումը տվյալ տարածքում որևէ այլ ողջամիտ միջոցներով չի կարող ապահովվել: Շեղումների գործողությունը պետք է սահմանափակվի որքան հնարավոր է կարճ ժամկետով և չպետք է գերազանցի երեք տարին, որի ավարտին պետք է քննարկում անցկացվի՝ որոշելու համար, թե արդյոք բավարար չափով առաջընթաց ձեռք է բերվել: Եթե անդամ պետությունը մտադրություն ունի երկրորդ անգամ շեղում կատարելու, այն պետք է Հանձնաժողովին

տեղեկացնի ուսումնասիրության, ինչպես նաև երկրորդ շեղման վերաբերյալ որոշման հիմքերի մասին: Նման որևէ շեղում չպետք է գերազանցի երեք տարի ժամկետը:

2. Բացառիկ հանգամանքներում անդամ պետությունը կարող է Հանձնաժողովին դիմել երրորդ՝ երեք տարին չգերազանցող ժամկետով շեղման համար: Նման դիմումի մասին Հանձնաժողովը որոշում է կայացնում երեք ամսվա ընթացքում:

3. 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն տրամադրված շեղումներում պետք է նշվի հետևյալը՝

ա) շեղման հիմքերը,

բ) տվյալ ցուցանիշը, նախորդ ստուգման համապատասխան արդյունքները և առավելագույն թույլատրելի նորման՝ ըստ շեղման,

գ) աշխարհագրական տարածքը, յուրաքանչյուր օր մատակարարվող ջրի քանակը, տվյալ բնակչությունը և այն հանգամանքը, թե արդյոք դա ազդում է սննդամթերք արտադրող որևէ ձեռնարկության վրա,

դ) համապատասխան հսկողության սխեմա, անհրաժեշտության դեպքում՝ հսկողության ավելի ինտենսիվ գրաֆիկով,

ե) անհրաժեշտ ուղղիչ միջոցի ծրագրի ամփոփ նկարագիրը, այդ թվում՝ աշխատանքների ժամանակացույցը, ծախսերի նախահաշիվը և ստուգման մասին դրույթները,

զ) շեղման համար պահանջվող ժամկետը:

4. Եթե իրավասու մարմինները համարում են, որ նորմայի հետ անհամապատասխանությունն աննշան բնույթ է կրում և, եթե 8(2) հոդվածի համաձայն ձեռնարկված միջոցը բավարար է՝ 30 օրվա ընթացքում խնդիրը վերացնելու համար, ապա 3-րդ պարբերության պահանջները կարող են չկիրառվել:

Այդ դեպքում իրավասու մարմինները կամ այլ համապատասխան մարմիններ սահմանում են միայն տվյալ ցուցանիշի առավելագույն թույլատրելի նորման և խնդիրը վերացնելու համար տրամադրվող ժամկետը:

5. 4-րդ պարբերության կիրառությանը դիմելու հնարավորությունն այլևս չի կարող գործել, եթե մատակարարման ժամանակ նախորդ 12 ամիսների ընթացքում գումարային 30 օրից ավելի տեղի է ունեցել նորմաներից որևէ մեկի խախտում:

6. Ցանկացած անդամ պետություն, որը դիմում է սույն հոդվածով նախատեսված շեղման կիրառությանը, պետք է ապահովի, որ բնակչությունը, որի վրա տարածվում է նման ցանկացած շեղում, անհապաղ համապատասխան կերպով տեղեկացվի շեղման և այն կարգավորող պայմանների մասին: Բացի դրանից՝ անդամ պետությունն անհրաժեշտության դեպքում պետք է ապահովի, որ խորհրդատվություն տրամադրվի բնակչության կոնկրետ այն խմբերին, որոնց համար շեղումն առանձնահատուկ ռիսկ կարող է ներկայացնել:

Այս պարտականությունները չեն կիրառվում 4-րդ պարբերությունում նկարագրված հանգամանքներում, եթե իրավասու մարմինները հակառակի մասին որոշում չեն կայացնում:

7. Բացառությամբ 4-րդ պարբերության համաձայն թույլատրված շեղումների՝ անդամ պետությունը պետք է երկու ամսվա ընթացքում Հանձնաժողովին տեղեկացնի օրական միջինը 1 000 խորանարդ մետրը գերազանցող ծավալով կամ ավելի քան 5 000 անձանց սպասարկում ապահովող անհատական ջրամատակարարմանը վերաբերող ցանկացած շեղման մասին, այդ թվում՝ 3-րդ պարբերության մեջ նշված տեղեկությունները:

8. Սույն հոդվածը չի կիրառվում շտերով կամ տարաներով վաճառքի համար առաջարկվող մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի նկատմամբ:

Հոդված 10

Մաքրման, սարքավորումների և նյութերի որակի ապահովում

Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են՝ ապահովելու համար, որ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի արտադրության կամ բաշխման

նպատակով օգտագործվող նոր կայանքների համար նյութերը կամ նոր կայանքների համար նյութերի հետ կապված աղտոտիչները մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրում չմնան ավելի բարձր կոնցենտրացիաներով, քան անհրաժեշտ է դրանց օգտագործման նպատակի համար, և ուղղակիորեն կամ անուղղակիորեն չթուլացնեն սույն Հրահանգով նախատեսված՝ մարդու առողջության պաշտպանությունը: «Անդամ պետությունների՝ շինարարական արտադրանքին վերաբերող իրավական ակտերի, կանոնակարգերի և վարչական ակտերի մոտարկման մասին» Խորհրդի 1988 թվականի դեկտեմբերի 21-ի 89/106/ԵՏՀ հրահանգի ([10](#)) 3-րդ և 4 (1) հոդվածներին համապատասխան բացատրական փաստաթղթերում և տեխնիկական կանոնակարգերում պետք է պահպանվեն սույն Հրահանգի պահանջները:

Հոդված 11

Հավելվածների վերանայումը

1. Առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ՝ Հանձնաժողովը վերանայում է I հավելվածը՝ հաշվի առնելով գիտատեխնիկական առաջընթացը և, Պայմանագրի 189գ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն, անհրաժեշտության դեպքում առաջարկություններ է ներկայացնում:

▼M2

2. Հանձնաժողովն առնվազն յուրաքանչյուր հինգ տարին մեկ անգամ փոփոխում է II և III հավելվածները՝ գիտատեխնիկական առաջընթացի հետ համապատասխանեցման գծով անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համար:

Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն 12(3) հոդվածում նշված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼M1

Հոդված 12

1. Հանձնաժողովի աշխատանքներին օժանդակում է կոմիտեն:

2. Երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են 1999/468/ԵՀ ([11](#)) որոշման 4-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 4(3) հոդվածով նախատեսված ժամկետը սահմանվում է երեք ամիս:

▼M2

3. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

▼B

Հոդված 13

Տեղեկատվությունը և զեկույցները

1. Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ սպառողներին համապատասխան և թարմացված տեղեկություններ տրամադրվի մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին:

2. Չհակասելով «Շրջակա միջավայրի մասին տեղեկությունների մատչելիության ազատության մասին» Խորհրդի 1990 թվականի հունիսի 7-ի 90/313/ԵՏՀ հրահանգին ([12](#))՝ յուրաքանչյուր անդամ պետություն յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի մասին պետք է զեկույց հրապարակի՝ սպառողներին իրազեկելու նպատակով: Առաջին զեկույցը պետք է վերաբերի 2002, 2003 և 2004 թվականներին:

Յուրաքանչյուր զեկույց պետք է առնվազն ընդգրկի օրական միջինը 1 000 խորանարդ մետրը գերազանցող ծավալ կամ ավելի քան 5 000 անձանց սպասարկում ապահովող անհատական բոլոր ջրամատակարարումները, ինչպես նաև պետք է ընդգրկի երեք օրացուցային տարիներ և հրապարակվի հաշվետու ժամանակաշրջանի վերջին մեկ օրացուցային տարվա ընթացքում:

3. Անդամ պետություններն իրենց զեկույցները Հանձնաժողով են ուղարկում դրանց հրապարակումից հետո երկու ամսվա ընթացքում:

▼M2

4. 2-րդ պարբերությամբ նախատեսվող զեկույցների ձևաչափերը և պահանջվող նվազագույն տեղեկությունները որոշվում են առանձնահատուկ կերպով հաշվի առնելով 3(2) հոդվածում, 5(2) և (3) հոդվածում, 7(2) հոդվածում, 8-րդ հոդվածում, 9(6) և (7) հոդվածում և 15(1) հոդվածում նշված միջոցները և, հարկ եղած դեպքում, փոփոխության են ենթարկվում՝ 12(2) հոդվածում նշված կառավարման ընթացակարգին համապատասխան:

▼B

5. Հանձնաժողովն ուսումնասիրում է անդամ պետությունների զեկույցները և յուրաքանչյուր երեք տարին մեկ Համայնքում մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի վերաբերյալ հանրագումարային զեկույց է հրապարակում: Այդ զեկույցը հրապարակվում է անդամ պետությունների զեկույցներն ստանալուց հետո ինն ամսվա ընթացքում:

▼M2

6. Սույն Հրահանգի մասին 2-րդ պարբերության մեջ նշված առաջին զեկույցի հետ միասին անդամ պետությունները նաև կազմում են Հանձնաժողովին ուղարկման ենթակա զեկույց՝ 6(3) հոդվածի և I հավելվածի Բ մասի 10-րդ ծանոթագրության համաձայն՝ իրենց պարտականությունների կատարման համար իրենց կողմից ձեռնարկված կամ պլանավորվող միջոցների մասին: Այդ զեկույցի ձևաչափի մասին առաջարկությունը անհրաժեշտության դեպքում ներկայացվում է 12(2) հոդվածում նշված՝ կառավարման ընթացակարգին համապատասխան:

▼B

Հոդված 14

Համապատասխանության ապահովման ժամանակացույց

Անդամ պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ ապահովելու համար, որ առանց հակասելու I հավելվածի Բ մասի 2-րդ, 4-րդ և 10-րդ ծանոթագրություններին, մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակը համապատասխանի սույն Հրահանգին՝ այն ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարվա ընթացքում:

Հոդված 15

Բացառիկ հանգամանքները

1. Անդամ պետությունները կարող են, բացառիկ հանգամանքներում և աշխարհագրորեն որոշված տարածքներում, Հանձնաժողովին դիմել ավելի երկար ժամկետ տրամադրելու խնդրանքով, քան նախատեսված է 14 -րդ հոդվածով: Լրացուցիչ ժամկետը չպետք է գերազանցի երեք տարին, որի ավարտին պետք է անցկացվի ուսումնասիրություն և ուղարկվի Հանձնաժողով, որը կարող է, այդ ուսումնասիրության հիման վրա, երկրորդ լրացուցիչ ժամկետ տրամադրել՝ մինչև երեք տարի տևողությամբ: Սույն դրույթը չի կիրառվում շշերով կամ տարաներով վաճառքի համար առաջարկվող՝ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի նկատմամբ:

2. Ցանկացած նման դիմումի մեջ, որը պետք է հիմնավորված լինի, պետք է նշվեն առաջացած դժվարությունները և 9(3) հոդվածով նախատեսված առնվազն բոլոր տեղեկությունները:

▼M2

3. Այդ դիմումը պետք է ուսումնասիրվի 12(2) հոդվածում նշված կառավարման ընթացակարգին համապատասխան:

▼B

4. Ցանկացած անդամ պետություն, որը կիրառում է սույն հոդվածը, պետք է ապահովի, որ բնակչությունը, որի վրա տարածվում է իր դիմումը, անհապաղ համապատասխան կերպով տեղեկացվի այդ դիմումի հետևանքների մասին: Բացի դրանից՝ անհրաժեշտության դեպքում անդամ պետությունը պետք է ապահովի, որ խորհրդատվություն տրամադրվի բնակչության կոնկրետ այն խմբերին, որոնց համար դիմումն առանձնահատուկ ռիսկ կարող է ներկայացնել:

Հոդված 16

Ուժը կորցրած ճանաչելը

1. Սույնով ուժը կորցրած է ճանաչվում 80/778/ԵՏՀ հրահանգը՝ սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարի անց: Պահպանելով 2-րդ պարբերության դրույթները՝ ուժը կորցրած ճանաչելը չպետք է հակասի IV հավելվածով նախատեսված՝ ազգային իրավունքում փոխատեղելու և կիրառման վերջնաժամկետների մասով անդամ պետությունների պարտականություններին:

Ուժը կորցրած հրահանգին կատարված ցանկացած հղում պետք է հասկացվի որպես սույն Հրահանգին արված հղում և V հավելվածում սահմանված համեմատական աղյուսակի համաձայն ընթերցվի :

2. Անդամ պետությունը երբ գործողության մեջ է դնում սույն Հրահանգի պահանջները կատարելու համար անհրաժեշտ իրավական ակտերը, կանոնակարգերն ու վարչական ակտերը և ձեռնարկում է 14-րդ հոդվածով նախատեսված միջոցները, ապա անդամ պետությունում մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի նկատմամբ կիրառվում է սույն Հրահանգը, այլ ոչ թե 80/778/ԵՏՀ հրահանգը:

Հոդված 17

Ազգային իրավունք փոխատեղելը

1. Անդամ պետությունները սույն Հրահանգի պահանջները կատարելու համար անհրաժեշտ իրավական ակտերը, կանոնակարգերը և վարչական ակտերը գործողության մեջ են դնում՝ այն ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում: Նրանք այդ մասին անհապաղ տեղեկացնում են Հանձնաժողովին:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ ակտերը, ապա դրանցում պետք է հղում պարունակվի սույն Հրահանգին կամ դրանք պետք է ուղեկցվեն նման հղումներով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին են փոխանցում սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում իրենց կողմից ընդունվող ազգային իրավունքի դրույթների տեքստերը:

Հոդված 18

Ուժի մեջ մտնելը

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական համայնքների պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հասցեատերերը

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԱՆԵՐ

ՄԱՍ Ա

Միկրոկենսաբանական ցուցանիշներ

Ցուցանիշը	Նորման (քանակ/100 մլ)
<i>Esherichia coli</i> (<i>E. Coli</i>) տեսակի մանրէներ	0
Էնտերոկոկկ (<i>Enterococci</i>)	0

Հետևյալը կիրառվում է շերտով կամ տարաներով վաճառքի համար առաջարկվող ջրի նկատմամբ՝

Ցուցանիշ	Նորմա
<i>Esherichia coli</i> (<i>E. Coli</i>) տեսակի մանրէներ	0/250 մլ
Էնտերոկոկկ (<i>Enterococci</i>)	0/250 մլ
Պսևդոմոնաս աերուգինոզա (<i>Pseudomonas aeruginosa</i>)	0/250 մլ
Գաղութների քանակը 22 °C	100/մլ
Գաղութների քանակը 37 °C	20/մլ

ՄԱՍ Բ

Քիմիական կազմի ցուցանիշներ

Ցուցանիշ	Նորմա	Չափման միավորը	Ծանոթագրություն
Ակրիլամիդ	0,10	մկգ/լ	Ծանոթագրություն 1
Ծարիր (անտիմոն)	5,0	մկգ/լ	
Արսեն	10	մկգ/լ	

Բենզոլ	1,0	մկգ/լ	
Բենզ(ա)պիրեն	0,010	մկգ/լ	
Բոր	1,0	մգ/լ	
Բրոմատ	10	մկգ/լ	Ծանոթագրություն 2
Կադմիում	5,0	մկգ/լ	
Քրոմ	50	մկգ/լ	
Պղինձ	2,0	մգ/լ	Ծանոթագրություն 3
Ցիանիդ	50	մկգ/լ	
1,2-դիքլորէթան	3,0	մկգ/լ	
Էպիքլորհիդրին	0,10	մկգ/լ	Ծանոթագրություն 1
Ֆտորիդ	1,5	մգ/լ	
Կապար	10	մկգ/լ	Ծանոթագրություններ 3 և 4
Սնդիկ	1,0	մկգ/լ	
Նիկել	20	մկգ/լ	Ծանոթագրություն 3
Նիտրատ	50	մգ/լ	Ծանոթագրություն 5
Նիտրիտ	0,50	մգ/լ	Ծանոթագրություն 5
Թունաքիմիկատներ	0,10	մկգ/լ	Ծանոթագրություններ 6 և 7
Թունաքիմիկատներ – Ընդամենը	0,50	մկգ/լ	Ծանոթագրություններ 6 և 8
Պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածիններ	0,10	մկգ/լ	Առանձնացված միացությունների կոնցենտրացիաների գումարային ծավալը Ծանոթագրություն 9
Սելեն	10	մկգ/լ	
Քառաքլորէթիլեն և եռքլորէթիլեն	10	մկգ/լ	Առանձնացված ցուցանիշների կոնցենտրացիաների գումարային ծավալը Ծանոթագրություն 9
Եռհալոգենմեթան Ընդամենը	– 100	մկգ/լ	Առանձնացված միացությունների կոնցենտրացիաների գումարային ծավալը Ծանոթագրություն 10
Վինիլքլորիդ	0,50	մկգ/լ	Ծանոթագրություն 1

Ծանոթագրություն 1

Նորման վերաբերում է ջրում մոնոմերի մնացորդային կոնցենտրացիային, որը հաշվարկվում է ըստ սպեցիֆիկացիաների՝ ջրի հետ կոնտակտի մեջ մտած համապատասխան պոլիմերից անջատված մոնոմերի առավելագույն քանակության հիման վրա:

Ծանոթագրություն 2

Առանց թուլացնելու վարակազերծման ազդեցությունը՝ անդամ պետությունները պետք է ձգտեն հասնել ավելի ցածր նորմայի, եթե հնարավոր է:

6(1)(ա), (բ) և (դ) հոդվածում նշված ջրի համար նորման պետք է բավարարվի ամենաուշը սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո 10 օրացուցային տարում: Բրոմատի համար սահմանված նորման 25 մկգ/լ է՝ սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարի անց և այն ուժի մեջ մտնելուց հետո տասը տարվա ընթացքում:

Ծանոթագրություն 3

Նորման կիրառվում է մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի նմուշի նկատմամբ, որը նմուշառման համապատասխան մեթոդով ([13](#)) վերցվել է ծորակից այնպես, որ ներկայացնի սպառողների կողմից կլանվող շաբաթական միջին նորման: Համապատասխան դեպքում նմուշառման և հսկողության մեթոդները պետք է կիրառվեն համաձայնեցված կերպով, որոնք պետք է 7(4) հոդվածի համաձայն մշակվեն: Անդամ պետությունները պետք է հաշվի առնեն առավելագույն սահմանազღծերին հասնող դեպքերը, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ մարդու առողջության վրա:

Ծանոթագրություն 4

6(1)(ա), (բ) և (դ) հոդվածում նշված ջրի համար նորման պետք է բավարարվի սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո ամենաուշը 15 օրացուցային տարում: Կապարի համար սահմանված նորման 25 մկգ/լ է՝ սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարի անց և այն ուժի մեջ մտնելուց հետո 15 տարվա ընթացքում:

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ձեռնարկվեն բոլոր համապատասխան միջոցները՝ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի մեջ կապարի կոնցենտրացիան նվազեցնելու նպատակով այնքանով, որքանով հնարավոր է նորմային համապատասխանելու համար պահանջվող ժամկետի ընթացքում:

Այդ նորմային համապատասխանելու համար միջոցներ ձեռնարկելիս անդամ պետությունները պետք է առաջնահերթ կերպով անդրադառնան մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի մեջ կապարի բարձր կոնցենտրացիային:

Ծանոթագրություն 5

Անդամ պետությունները պետք է ապահովեն հետևյալ պայմանը՝ $[\text{նիտրատ}]/50 + [\text{նիտրիտ}]/3 \leq 1$, որտեղ ուղղանկյուն փակագծերում գրվում է նիտրատների (NO_3) և նիտրիտների (NO_2) կոնցենտրացիան՝ արտահայտված մգ/լ-ով, և որ ջրի մաքրման կայաններից դուրս եկող ջրում նիտրիտների կոնցենտրացիան չգերազանցի 0.10 մգ/լ նորման:

Ծանոթագրություն 6

«Թունաքիմիկատներ» նշանակում է՝

- օրգանական ինսեկտիցիդներ
 - օրգանական հերբիցիդներ,
 - օրգանական ֆունգիցիդներ,
 - օրգանական նեմատոցիդներ,
 - օրգանական ակարիցիդներ,
 - օրգանական ալգիցիդներ,
 - օրգանական ռոդենտիցիդներ,
 - օրգանական սլիմիցիդներ,
 - դրանց հետ կապված արտադրանքներ (ի թիվս այլոց՝ աճի կարգավորիչներ)
- և դրանց համապատասխան մետաբոլիտները, քայքայման ու ռեակցիայի արդյունքները:

Հսկողության պետք է ենթարկվեն միայն այն թունաքիմիկատները, որոնք հնարավոր է, որ առկա լինեն մատակարարվող ջրում:

Ծանոթագրություն 7

Նորման վերաբերում է յուրաքանչյուր առանձին թունաքիմիկատի: Ալդրինի, դիելդրինի, հեպտաքլորի և հեպտաքլորի էպօքսիդի դեպքում նորման 0,030 մկգ/լ է:

Ծանոթագրություն 8

«Թունաքիմիկատներ — ընդամենը» նշանակում է առանձին թունաքիմիկատների գումարային չափը, որոնք հայտնաբերվել են և որոնց քանակը որոշվել է հսկողության ընթացքում:

Ծանոթագրություն 9

Առանձնացված միացություններն են՝

- բենզ(б)ֆլուորանտեն,
- բենզ(к)ֆլուորանտեն,
- բենզ(ghi)պերիլեն,
- indeno(1,2,3-cd)pyrene:

Ծանոթագրություն 10

Առանց թուլացնելու վարակագերծման ազդեցությունը, անդամ պետությունները պետք է ձգտեն հասնել ավելի ցածր նորմայի, եթե հնարավոր է:

Առանձնացված միացություններն են՝ եռքլորմեթան (քլորոֆորմ), երբրոմմեթան (բրոմոֆորմ), երկբրոմքլորմեթան (*dibromochloromethane*), բրոմերկքլորմեթան (*bromodichloromethane*):

6(1)(ա), (բ) և (դ) հոդվածում նշված ջրի համար նորման պետք է բավարարվի սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո ամենաուշը 10 օրացուցային տարիների ընթացքում: ԵՀՄ-ի (եռիալոզենմեթան) համար սահմանված նորման 150 մկգ/լ է՝ սույն Հրահանգն ուժի մեջ մտնելուց հետո հինգ տարուց և այն ուժի մեջ մտնելուց մինչև տասը տարի անց:

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ձեռնարկվեն բոլոր համապատասխան միջոցները՝ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի մեջ ԵՀՄ-ների կոնցենտրացիան նվազեցնելու նպատակով այնքանով, որքանով հնարավոր է՝ նորմային համապատասխանելու համար պահանջվող ժամկետի ընթացքում:

Այդ նորմային համապատասխանելու համար միջոցներ ձեռնարկելիս անդամ պետությունները պետք է առաջնահերթ կերպով անդրադառնան այն դեպքերին, որտեղ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի մեջ ԵՀՄ-ների կոնցենտրացիան ամենաբարձրն է:

ՄԱՍ 9

Ինդիկատոր ցուցանիշներ

Ցուցանիշ	Նորմա	Չափման միավորը	Ծանոթագրություն
Ալյումին	200	մկգ/լ	
Ամոնիում	0,50	մգ/լ	
Քլորիդ	250	մգ/լ	Ծանոթագրություն 1
Սուլֆիտվերականգնող կլոստրիդիումներ (<i>Clostridium perfringens</i>) (ներառյալ	0	(քանակ/100 մլ)	Ծանոթագրություն 2

սպորները)			
Գույն	Ընդունելի է սպառողների համար և նորմային չհամապատասխանող փոփոխություն չի ներկայացնում		
Էլեկտրահաղորդականությունը	2 500	մկՍմ սմ-ի՝ 20 °C ջերմաստիճանում	Ծանոթագրություն 1
Ջրածնային իոնների կոնցենտրացիա	$\geq 6,5$ և $\leq 9,5$	pH միավորներ	Ծանոթագրություններ 1 և 3
Երկաթ	200	մկգ/լ	
Մանգան	50	մկգ/լ	
Հոտ	Ընդունելի է սպառողների համար և նորմային չհամապատասխանող փոփոխություն չի ներկայացնում		
Օքսիդանալիություն	5,0	մգ/լ O ₂	Ծանոթագրություն 4
Սուլֆատ	250	մգ/լ	Ծանոթագրություն 1
Նատրիում	200	մգ/լ	
Համ	Ընդունելի է սպառողների համար և նորմային չհամապատասխանող փոփոխություն չի ներկայացնում		
Գաղութների քանակ 22°	Նորմային չհամապատասխանող փոփոխություն չկա		
Կոլիֆորմ մանրէներ	0	քանակ/100 մլ	Ծանոթագրություն 5
Ընդհանուր օրգանական ածխածին	Նորմային չհամապատասխանող փոփոխություն չկա		Ծանոթագրություն 6
Պղտորություն	Ընդունելի է սպառողների համար, և նորմային չհամապատասխանող փոփոխություն չի ներկայացնում		Ծանոթագրություն 7

ՌԱԴԻՈԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Ցուցանիշ	Նորմա	Չափման միավորը	Ծանոթագրություններ
----------	-------	----------------	--------------------

Տրիտիում	100	Բկ/լ	Ծանոթագրություններ 8 և 10
Ընդհանուր դոզայի կողմնորոշիչ չափ	0,10	մՋվ/տարի	Ծանոթագրություններ 9 և 10

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

ԱՂՅՈՒՍԱԿ Ա.

Լաբորատոր հետազոտության ենթակա ցուցանիշները

1. Վերահսկիչ ստուգումներ

Վերահսկիչ ստուգման նպատակը մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի զգայորոշական (օրգանոլեպտիկ) և միկրոկենսաբանական հատկանիշների մասին պարբերական կարգով տեղեկություններ, ինչպես նաև՝ կիրառման դեպքում, խմելու ջրի մաքրման արդյունավետության (հատկապես վարակազերծման) մասին տեղեկություններ տրամադրելն է՝ որոշելու համար, թե արդյոք մարդու կողմից սպառման համար նախատեսված ջուրը համապատասխանում է կամ չի համապատասխանում սույն Հրահանգով սահմանված նորմաներին:

Ստորև նշված ցուցանիշները պետք է ենթարկվեն վերահսկիչ ստուգման: Անդամ պետությունները նպատակահարմար համարելու դեպքում կարող են այս ցանկին ավելացնել այլ ցուցանիշներ:

Ալյումինիում (Ծանոթագրություն 1)

Ամոնիում

Գոլյն

Էլեկտրահաղորդականություն

Սուլֆիտվերականգնող կլոստրիդիումներ (*Clostridium perfringens*) (ներառյալ սպորները) (Ծանոթագրություն 2)

Escherichia coli (*E. Coli*) տեսակի մանրէներ

Ջրածնային իոնների կոնցենտրացիա

Երկաթ (Ծանոթագրություն 1)

Նիտրիտ (Ծանոթագրություն 3)

Հոտ

Պսևդոմոնաս աերուգինոզա (*Pseudomonas aeruginosa*) (Ծանոթագրություն 4)

Համ

Գաղութների քանակը՝ 22 °C և 37 °C ջերմաստիճանում (Ծանոթագրություն 4)

Կոլիֆորմ մանրէներ

Պղտորություն

Ծանոթագրություն 1	Անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ օգտագործվում է որպես ֆլուկուանտ (1):
Ծանոթագրություն 2	Անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ ջուրը վերցվում է մակերևութային ջրաղբյուրներից կամ մակերևութային ջրերի ազդեցությանը ենթարկվող աղբյուրներից:
Ծանոթագրություն 3	Անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ որպես վարակազերծման միջոց կիրառվում է քլորամինով մշակումը (1):
Ծանոթագրություն 4	Անհրաժեշտ է միայն այն դեպքում, երբ ջուրը վաճառքի համար առաջարկվում է շշերով կամ տարաներով:
(*) Մնացած բոլոր դեպքերում ցուցանիշները ենթարկվում են վերստուգիչ ստուգումների:	

▼M2

2. Վերստուգիչ ստուգումներ

Վերստուգիչ ստուգման նպատակը անհրաժեշտ տեղեկություններ տրամադրելն է այն մասին, թե արդյոք ապահովվում է, թե չի ապահովվում սույն Հրահանգով նախատեսված ցուցանիշի նորմաների հետ համապատասխանությունը: Բոլոր ցուցանիշները, որոնք սահմանված են 5(2) և (3) հոդվածի համաձայն, պետք է ենթարկվեն վերստուգիչ ստուգման, եթե իրավասու մարմիններն իրենց կողմից որոշված ժամկետի ընթացքում չեն կարող հաստատել, որ տվյալ ցուցանիշը դժվար թե լինի մատակարարվող ջրում այն կոնցենտրացիաներով, որոնք կարող են հանգեցնել տվյալ ցուցանիշի նորմայի խախտմանը: Սույն կետը չի տարածվում ռադիոակտիվության ցուցանիշների վրա, որոնց նկատմամբ՝ I հավելվածի Գ մասի 8-րդ, 9-րդ և 10-րդ ծանոթագրությունների համաձայն, հսկողություն է իրականացվում Հանձնաժողովի կողմից ընդունված պահանջներին համապատասխան: Լրացումների միջոցով սույն հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված ակտերը պետք է ընդունվեն՝ 12(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

ԱՂՅՈՒՍԱԿ Բ1

Մարդու կողմից սպառման համար նախատեսված՝ ջրաբաշխիչ ցանցից կամ ջրի ցիստեռնից մատակարարվող կամ սննդամթերք արտադրող ձեռնարկությունների կողմից օգտագործվող ջրի նմուշառման և լաբորատոր հետազոտության նվազագույն հաճախականությունը

Անդամ պետությունները պետք է նմուշները վերցնեն համապատասխանության ապահովման կետերում, ինչպես սահմանված է 6(1) հոդվածով, ապահովելու համար, որ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջուրը համապատասխանում է սույն Հրահանգի պահանջներին: Այնուամենայնիվ, ջրաբաշխիչ ցանցերի դեպքում անդամ պետությունը կոնկրետ ցուցանիշների համար կարող է նմուշները վերցնել մատակարարման գոտիում կամ մաքրման աշխատանքների ժամանակ, եթե հնարավոր է ցույց տալ, որ տվյալ ցուցանիշների չափված նորմաներում որևէ անցանկալի փոփոխություն չի լինելու:

Յուրաքանչյուր օր մատակարարման գոտիում բաշխվող կամ արտադրվող ջրի	Վերահսկիչ ստուգում. նմուշների քանակը՝ տարեկան	Վերստուգիչ ստուգում. նմուշների քանակը՝ տարեկան
------------------------------------------------------------------------	------------------------------------------------------	-------------------------------------------------------

ծավալը (Ծանոթագրություններ 1 և 2)		կտրվածքով (Ծանոթագրություններ 3, 4 և 5)	կտրվածքով (Ծանոթագրություններ 3 և 5)
մ ³			
	≤ 100	(Ծանոթագրություն 6)	(Ծանոթագրություն 6)
> 100	≤ 1 000	4	1
> 1 000	≤ 10 000	4 + 3 յուրաքանչյուր 1 000 մ ³ /օրվա կտրվածքով և ընդհանուր ծավալի մնացորդից	1 + 1 յուրաքանչյուր 3,300 մ ³ /օրվա կտրվածքով և ընդհանուր ծավալի մնացորդից
> 10 000	≤ 100 000		3 + 1 յուրաքանչյուր 10,000 մ ³ /օրվա կտրվածքով և ընդհանուր ծավալի մնացորդից
> 100 000			10 + 1 յուրաքանչյուր 25,000 մ ³ /օր համար և դրա մի մասը՝ ընդհանուր ծավալի մեջ

Ծանոթագրություն 1

Մատակարարման գոտին աշխարհագրական հիմքերով որոշված տարածք է, որտեղ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջուրը գալիս է մեկ կամ մի քանի աղբյուրներից, և որտեղ ջրի որակը կարող է համարվել մոտավորապես միանման:

Ծանոթագրություն 2

Ծավալները հաշվարկվում են որպես օրացուցային տարվա ընթացքում վերցված միջինը: Անդամ պետությունը կարող է ջրի ծավալի փոխարեն օգտագործել մատակարարման գոտու բնակիչների թիվը՝ նվազագույն հաճախականությունը որոշելու համար՝ որպես հիմք վերցնելով 200 լ/օր/մեկ շնչի հաշվով բանաձևը:

Ծանոթագրություն 3

Ընդհատվող ռեժիմով կարճաժամկետ մատակարարումների դեպքում ցիստեռներով մատակարարվող բաշխվող ջրի ստուգման

հաճախականությունը որոշվում է տվյալ անդամ պետության կողմից:

Ծանոթագրություն 4

I հավելվածի տարբեր ցուցանիշների համար անդամ պետությունը կարող է կրճատել աղյուսակում նշված նմուշների քանակը, եթե՝

ա) առնվազն երկու հաջորդական տարիների ընթացքում վերցված նմուշներից ստացված արդյունքների նորմաները կայուն են և էականորեն ավելի բարենպաստ են, քան I հավելվածում սահմանված սահմանաչափերը, և

բ) չկա որևէ գործոն, որը հավանաբար կարող է ջրի որակի վատթարացում առաջացնել:

Կիրառվող ամենացածր հաճախականությունը չպետք է աղյուսակում նշված նմուշների քանակի 50 տոկոսից պակաս լինի՝ բացառությամբ 6-րդ ծանոթագրությունում նշված մասնավոր դեպքի:

Ծանոթագրություն 5

Որքան հնարավոր է, նմուշների քանակը ժամանակի և տարածքի մեջ պետք է բաշխվի հավասարապես:

Ծանոթագրություն 6

Հաճախականությունը որոշվում է տվյալ անդամ պետության կողմից:

ԱՂՅՈՒՍԱԿ Բ 2

Վաճառքի նպատակով շաղցված կամ տարանների մեջ լցված ջրի նմուշառման և լաբորատոր հետազոտության նվազագույն հաճախականությունը

Շշերով կամ տարաներով վաճառքի նպատակով արտադրվող ջրի ծավալը՝ օրվա կտրվածքով ⁽¹⁾	Վերահսկիչ ստուգում. նմուշների քանակը՝ տարեկան կտրվածքով	Վերստուգիչ ստուգում. նմուշների քանակը՝ տարեկան կտրվածքով
մ ₃		
≤ 10	1	1
> 10	≤ 60 12	1
> 60	1 յուրաքանչյուր 5 մ ₃ -ից և ընդհանուր ծավալի մնացորդից	1 յուրաքանչյուր 100 մ ₃ -ից և ընդհանուր ծավալի մնացորդից
(1) Ծավալները հաշվարկվում են որպես օրացուցային տարվա ընթացքում		

վերցված միջինը:

ՀԱՎԵԼՎԱԾ III

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԸ

Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է ապահովի, որ ցանկացած լաբորատորիա, որտեղ լաբորատոր հետազոտության են ենթարկվում նմուշները, ունենա որակի անալիտիկ հսկողության համակարգ, որը ժամանակ առ ժամանակ ստուգման ենթարկվի լաբորատորիայի վերահսկողությունից դուրս գտնվող և այդ նպատակի համար իրավասու մարմնի կողմից հաստատված անձի կողմից:

1. ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ, ՈՐՈՆՑ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

▼M2

Միկրոկենսաբանական ցուցանիշների մեթոդների համար ստորև ներկայացվող սկզբունքները ներկայացված են կամ ստուգաճշտման համար՝ եթե տրվում է ՍԵԿ/ԻՍՕ մեթոդը, կամ որպես ուղեցույց ծառայելու համար, մինչև Հանձնաժողովը հետազայում այդ ցուցանիշների համար կընդունի հավելյալ ՍԵԿ/ԻՍՕ միջազգային մեթոդներ : Անդամ պետությունները կարող են օգտագործել այլընտրանքային մեթոդներ՝ պայմանով, որ պահպանվեն 7(5) հոդվածի դրույթները:

ՍԵԿ/ԻՍՕ միջազգային մեթոդների գծով հետազա ակտերը, որոնք նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու և, ի թիվս այլոց, այն լրացնելու համար, պետք է ընդունվեն՝ 12(3) հոդվածում նշված՝ ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

▼B

Կոլիֆորմ մանրէներ և *Escherichia coli* (*E. Coli*) տեսակի մանրէներ (ISO 9308-1)

Էնտերոկոկկ (*Enterococci*)(ISO 7899-2)

Պսևդոմոնաս աերուգինոզա (*Pseudomonas aeruginosa*) (prEN ISO 12780)

Կուլտիվացվող միկրոօրգանիզմների ցանկ — Գաղութների քանակը՝ 22 °C պայմաններում (prEN ISO 6222)

Կուլտիվացվող միկրոօրգանիզմների ցանկ — Գաղութների քանակը՝ 37 °C պայմաններում (prEN ISO 6222)

Սուլֆիտվերականգնող կլոստրիդիումներ (*Clostridium perfringens*) (ներառյալ սպորները)

Մեմբրանային ֆիլտրում, որին հետևում է մեմբրանի անաերոբ (անօդակյաց) ինկուբացիան m-CP ազարի վրա 44 ± 1 °C ջերմաստիճանի պայմաններում 21 ± 3 ժամվա ընթացքում: Հաշվել ոչ թափանցիկ գաղութները, որոնք դառնում են վարդագույն կամ կարմիր ամոնիումի հիդրօքսիդի գոլորշիների ազդեցությանը 20–30 վայրկյան ենթարկվելուց հետո:

Ծանոթագրություն 1

m-CP ազարի բաղադրությունը հետևյալն է՝

Բազային միջավայր

Տրիպտոզա (Tryptose)	30 գրամ
Խմորիչի էքստրակտ	20 գրամ

Սախարոզ	5 գրամ
L-ցիստեին հիդրոքլորիդ	1 գրամ
Մագնեզիումի սուլֆատ (MgSO ₄) · 7H ₂ O	0,1 գրամ
Բրոմկրեզոլ ծիրանագույն (պուրպուրային)	40 մգ
Ազար	15 գրամ
Զուր	1 000 մլ

Լուծել բազային միջավայրի բաղադրիչները, կարգավորել pH-ը 7,6 չափով և 121 °C ջերմաստիճանում 15 րոպե մշակել ավտոկլավում: Թողնել միջավայրը սառչի և ավելացնել՝

D-ցիկլոսերին	400 մգ
Պոլիմիքսին Բ սուլֆատ	25 մգ
Ինդոքսիլ-β-D-գլիկոզիդ ավելացնելուց առաջ պետք է լուծվի 8մլ ստերիլիզացված ջրում	60 մգ
Ֆիլտր — 0,5 տոկոսանոց ֆենոլֆտալինի և դիֆոսֆատի ստերիլիզացված լուծույթ	20 մլ
Ֆիլտր — 4,5 տոկոսանոց FeCl ₃ · 6H ₂ O ստերիլիզացված լուծույթ	2 մլ

2. ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ, ՈՐՈՆՑ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ

2.1. Ստորև բերվող ցուցանիշների համար սահմանված աշխատանքային բնութագրիչները վերաբերում են օգտագործվող լաբորատոր հետազոտության մեթոդին, որով առնվազն պետք է հնարավոր լինի չափելու նորմաներին հավասար կոնցենտրացիաները՝ սահմանված ճշտության, ճշգրտության և որոշելիության նկատմամբ: Անկախ գործածվող մեթոդի զգայունությունից՝ արդյունքը պետք է արտահայտվի՝ օգտագործելով տասնորդականների առնվազն նույն թիվը, որն օգտագործվում է I հավելվածի Բ և Գ մասերում նշված նորմաների համար:

Ցուցանիշները	Նորմայի ճշտության տոկոսը (Ծանոթագրություն 1)	Նորմայի ճշգրտության տոկոսը (Ծանոթագրություն 2)	Նորմայի որոշելիության տոկոսը (Ծանոթագրություն 3)	Պայմանները	Ծանոթագրություններ

Ակրիլամիդ				Պետք է ստուգվի՝ ըստ արտադրանքի տեխնիկական բնութագրի	
Ալյումին	10	10	10		
Ամոնիում	10	10	10		
Ծարիր (անտիմոն)	25	25	25		
Արսեն	10	10	10		
Բենզ(ա)պիրեն	25	25	25		
Բենզոլ	25	25	25		
Բոր	10	10	10		
Բրոմատ	25	25	25		
Կադմիում	10	10	10		
Քլորիդ	10	10	10		
Քրոմ	10	10	10		
Էլեկտրահաղորդականություն	10	10	10		
Պղինձ	10	10	10		
Ցիանիդ	10	10	10		Ծանոթագրություն 4
1,2-դիքլորէթան	25	25	10		
Էպիքլորհիդրին				Պետք է ստուգվի՝ ըստ արտադրանքի տեխնիկական բնութագրի	
Ֆտորիդ	10	10	10		
Երկաթ	10	10	10		
Կապար	10	10	10		
Մանգան	10	10	10		
Սնդիկ	20	10	20		
Նիկել	10	10	10		

Նիտրատ	10	10	10		
Նիտրիտ	10	10	10		
Օքսիդանալիություն	25	25	10		Ծանոթագրություն 5
Թունաքիմիկատներ	25	25	25		Ծանոթագրություն 6
Պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածիններ	25	25	25		Ծանոթագրություն 7
Սելեն	10	10	10		
Նատրիում	10	10	10		
Սուլֆատ	10	10	10		
Քառաքլորէթիլեն	25	25	10		Ծանոթագրություն 8
Եռքլորէթիլեն	25	25	10		Ծանոթագրություն 8
Եռհալոգեն մեթան – Ընդամենը	25	25	10		Ծանոթագրություն 7
Վինիլքլորիդ				Պետք է ստուգվի՝ ըստ արտադրանքի տեխնիկական բնութագրի	

2.2. Ջրածնային իոնների կոնցենտրացիայի համար սահմանված աշխատանքային բնութագրիչները վերաբերում են օգտագործվող լաբորատոր հետազոտության մեթոդին, որով առնվազն պետք է հնարավոր լինի չափելու նորմաներին հավասար կոնցենտրացիաները՝ 0,2 ρH միավորի ճշտությամբ և 0,2 միավորի ճշգրտությամբ:

Ծանոթագրություն 1 (i)	Ճշտությունը մշտապես առկա սխալանքն է և մեծ թվով կրկնակի չափումների միջին մեծության ու փաստացի մեծության տարբերությունը:
Ծանոթագրություն 2 (i)	Ճշգրտությունը պատահական սխալանքն է և սովորաբար արտահայտվում է որպես միջինի համեմատ արդյունքների սպրեդի ստանդարտ շեղում (խմբաքանակի մեջ կամ խմբաքանակների միջև): Ընդունելի ճշգրտությունը հարաբերական ստանդարտ շեղման կրկնակին է:

(*) Այս տերմինները ավելի մանրամասն սահմանված են ISO 5725 փաստաթղթում:

<p><i>Ծանոթագրություն 3</i></p>	<p>Որոշելիությունը՝</p> <p>-- կամ ցուցանիշի ցածր կոնցենտրացիա պարունակող (բնական) խմբաքանակի հարաբերական ստանդարտ շեղման եռապատիկը</p> <p>կամ</p> <p>դատարկ (գրոյական) նմուշի՝ խմբաքանակի մեջ հարաբերական ստանդարտ շեղման հնգապատիկը:</p>
<p><i>Ծանոթագրություն 4</i></p>	<p>Մեթոդի միջոցով պետք է որոշվի ցիանիդի բոլոր ձևերի ընդհանուր ծավալը:</p>
<p><i>Ծանոթագրություն 5</i></p>	<p>Օքսիդացումը պետք է տևի 10 րոպե 100 °C ջերմաստիճանում՝ թթվային պայմաններում պերմանգանատի օգտագործմամբ :</p>
<p><i>Ծանոթագրություն 6</i></p>	<p>Աշխատանքային բնութագրիչները կիրառվում են յուրաքանչյուր առանձին թունաքիմիկատի նկատմամբ և պայմանավորված են տվյալ թունաքիմիկատով: Ներկայումս հնարավոր չէ բոլոր թունաքիմիկատների համար ունենալ որոշելիության սահման, բայց անդամ պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն՝ այդ ստանդարտին հասնելու համար:</p>
<p><i>Ծանոթագրություն 7</i></p>	<p>Աշխատանքային բնութագրիչները կիրառվում են առանձին թունաքիմիկատների նկատմամբ, որոնք I հավելվածում նշված են 25 տոկոս նորմայի ներքո:</p>
<p><i>Ծանոթագրություն 8</i></p>	<p>Աշխատանքային բնութագրիչները կիրառվում են առանձին թունաքիմիկատների նկատմամբ, որոնք I հավելվածում</p>

	նշված են 50 տոկոս նորմայի ներքո:
--	----------------------------------

3. ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ, ՈՐՈՆՑ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՉԵՆ ԼԱԲՈՐԱՏՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ

Գույն

Հոտ

Համ

Ընդհանուր օրգանական ածխածին

Պղտորություն (Ծանոթագրություն 1)

Ծանոթագրություն 1	Մաքրված մակերևութային ջրում պղտորության նկատմամբ հսկողության համար սահմանված աշխատանքային բնութագրիչները վերաբերում են օգտագործվող լաբորատոր հետազոտության մեթոդին, որով առնվազն պետք է հնարավոր լինի չափելու նորմային հավասար կոնցենտրացիաները՝ 25 տոկոս ճշտությամբ, 25 տոկոս ճշգրտությամբ և 25 տոկոս որոշելիությամբ:
-------------------	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ՓՈԽԱՏԵՂՄԱՆ ԵՎ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏՆԵՐԸ

80/778/ԵՏՀ հրահանգ Փոխատեղում՝ 17.07.1982թ. Կիրառություն՝ 17.07.1985թ. Բոլոր անդամ պետությունները՝ բացառությամբ Իսպանիայի, Պորտուգալիայի և Գերմանիայի նոր դաշնային հողի	81/858/ԵՏՀ հրահանգ (Համապատասխանեցում՝ պայմանավորված Հունաստանի անդամակցությամբ)	«Իսպանիայի և Պորտուգալիայի անդամակցության մասին» ակտով	90/656/ԵՏ Հ հրահանգ՝ Գերմանիայի նոր դաշնային հողի համար	«Ավստրիայի, Շվեդիայի և Ֆինլանդիայի անդամակցության մասին» ակտ	91/692/ԵՏՀ հրահանգ
Հոդվածներ 1-ից 14			Կիրառություն՝ 31.12.1995թ.		
Հոդված 15	Փոփոխված է՝ ուժի մեջ	Փոփոխված է՝		Փոփոխված է՝ ուժի	

	մտնելով 1981 թվականի հունվարի 1-ից	ուժի մեջ մտնելով 1986 թվականի հունվարի 1-ից		մեջ մտնելով 1995 թվականի հունվարի 1-ից	
Հոդված 16					
Հոդված 17					Ավելացվել է 17(ա) հոդվածը
Հոդված 18					
Հոդված 19		Փոփոխված	Փոփոխված		
Հոդված 20					
Հոդված 21					

ՀԱՎԵԼՎԱԾ V

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Սույն հրահանգը	80/778/ԵՏՀ հրահանգ
Հոդված 1(1)	Հոդված 1(1)
Հոդված 1(2)	—
Հոդված 2(1) (ա) և (բ)	Հոդված 2
Հոդված 2(2)	—
Հոդված 3(1) (ա) և (բ)	Հոդված 4(1)
Հոդված 3(2) (ա) և (բ)	—
Հոդված 3(3)	—
Հոդված 4(1)	Հոդված 7(6)
Հոդված 4(2)	Հոդված 11
Հոդված	Հոդված 7(1)

5(1)	
Հոդված 5(2), առաջին նախադասություն	Հոդված 7(3)
Հոդված 5(2), երկրորդ նախադասություն	—
Հոդված 5(3)	—
Հոդված 6(1)	Հոդված 12(2)
Հոդված 6(2)–(3)	—
Հոդված 7(1)	Հոդված 12(1)
Հոդված 7(2)	—
Հոդված 7(3)	Հոդված 12(3)
Հոդված 7(4)	—
Հոդված 7(5)	Հոդված 12(5)
Հոդված 7(6)	—
Հոդված 8	—
Հոդված 9(1)	Հոդված 9(1) և հոդված 10(1)
Հոդված 9(2)–(6)	—
Հոդված 9(7)	Հոդված 9(2) և հոդված 10(3)
Հոդված 9(8)	—
Հոդված 10	Հոդված 8
Հոդված 11(1)	—
Հոդված 11(2)	Հոդված 13
Հոդված 12(1)	Հոդված 14

Հոդված 12(2) և (3)	Հոդված 15
Հոդված 13(1)	—
Հոդված 13(2)–(5)	Հոդված 17(ա) (ավելացված է 91/692/ԵՏՀ հոդվածով)
Հոդված 14	Հոդված 19
Հոդված 15	Հոդված 20
Հոդված 16	—
Հոդված 17	Հոդված 18
Հոդված 18	—
Հոդված 19	Հոդված 21

(1) ՊՏ C 131, 30.05.1995թ., էջ. 5 և ՊՏ C 213, 15.07.1997թ., էջ 8,

(2) ՊՏ C 82, 19.03.1996թ., էջ 64,

(3) ՊՏ C 100, 02.04.1996թ., էջ 134,

(4) Եվրոպական պառլամենտի 1996 թվականի դեկտեմբերի 12-ի եզրակացություն (ՊՏ C 20, 20.01.1997թ., էջ 133), Խորհրդի 1997 թվականի դեկտեմբերի 19-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 91, 26.03.1998 թ., էջ 1) և Եվրոպական պառլամենտի 1998 թվականի մայիսի 13-ի որոշում (ՊՏ C 167, 01.06.1998թ. էջ 92),

(5) ՊՏ L 229, 30.08.1980թ., էջ 11, «Անդամակցության մասին» 1994 թվականի ակտով վերջին անգամ փոփոխված հրահանգ,

(6) ՊՏ L 230, 19.08.1991թ., էջ 1, Հանձնաժողովի 96/68/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 277, 30.10.1996թ., էջ 25),

(7) ՊՏ L 123, 24.04.1998թ., էջ 1,

(8) ՊՏ L 229, 30.08.1980թ., էջ 1, 96/70/ԵՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 299, 23.11.1996թ. էջ 26);

(9) ՊՏ 22 09.02.1965թ., էջ 369, 93/39/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 214, 24.08.1993թ., էջ 22) ,

(10) ՊՏ L 40, 11.02.1989թ., էջ 12, 93/68/ԵՏՀ հրահանգով վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 220, 30.08.1993թ., էջ 1),

(11) Հանձնաժողովին վերապահված կիրարկման գծով լիազորությունների իրականացման կարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23),

(12) ՊՏ L 158, 23.06.1990թ., էջ 56,

(13) Ենթակա է ավելացման՝ ներկայումս անցկացվող ուսումնասիրության արդյունքների հիման վրա: